

իր խօսուածքը, իր վարմունքը, իր գործունէութիւնը մանաւանդ՝ ամէն վտահուցութիւն կը ներշնչէր այն մարդոց, որոնք կը զգային, կը տեսնէին սոսկալի վտանգը:

Կոչում ըրին իր ամէնէն փափուկ զգացումներուն, աւելի մօտէն ցոյց տուին փաղաղիչ հրդեհը եւ վտանգուած գեղեցիկ շէնքը:

Չափեց, կշռեց վերէն ի վար առաջարկուած գործը: — Մի վախնաք, թող բոցը սարքէ իր սարսափը, ես կ'ազատեմ այդ շէնքը, մի միայն մէկ պայմանով. — Բարեկամ մը, հայր մը, ընկեր մը, հոգեկից մ'ունիմ. ան հետս պէտք է ըլլայ: Անկից ետքը ալ դուք մի վրդովեք. հանդարտ մեզի հետեւեցէք:

Պայմանը այնքան դիւրին էր, որ շուտով կնքուեցաւ համաձայնութիւնը: — Երիտասարդը, Կոլոտ Յովհաննէս վարդապետն էր, որ ճիշդ 37 տարեկան, Թուրքիոյ Հայոց Պատրիարք եղաւ (1715): Իր հոգեկիցն էր Գրիգոր Վարդապետ, Շղթայակիր տիտղոսովը ծանօթ, Երուսաղէմի առաքելական Աթոռին բարեյիշատակ Պատրիարքը:

Կոլոտ պատուեց հրդեհի բոցեղէն պարիսպը, խղպացաւներսը, Շղթայակիրն ալ ետեւէն. վտանգը անհետացաւ. միջին դիշերուան արհաւիրքը՝ գեղեցիկ առաւօտի մը ծիրանեփայլ շողշուղումներով փարատեցաւ:

Անընդհատ քսան վեց տարի փայլեցաւ առաւօտը Թուրքիոյ Հայոց Պատրիարքներու պատմութեան մէջ, անընդհատ քսան վեց տարի:

* * *

Երուսաղէմի մէջ Հայոց վանքը, իր դարաւոր պատկառանքով Սուրբ-Երկրի աւանդութիւնները պահող այն հաստատութիւնը, երեւակայեցէք անգամ մը, ասկից զբեթէ երկու հարիւր տարի յառաջ, գայթաղութեան կենդրոն